

ՍԱՐԳԻՍ ԿՈՒԿՈՒՆՅԱՆԸ  
ԵՎ ՆՐԱ ԳԼԽԱՎՈՐԱԾ ԱՐՇԱՎԱՆՔԸ

ԿԱՐԻՆԵ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Հայ ազգային-ազատագրական շարժումների, ցեղասպանության և ինքնապաշտպանական մարտերի պատմության վերաբերյալ կան բավականին թվով հուշագրություններ, հոդվածներ ու մենագրություններ, բայց հայ ազատամարտի ուղադրավ դրսևորումներից մեկի՝ Սարգիս Կուկունյանի գլխավորած արշավախմբի պատմությունը ցայսօր անհրաժեշտ ուսումնասիրություն է դնալ հատման չի արժանացել: Մինչդեռ տարբեր պարբերականներում և ժողովածուներում հրատարակված հոդվածները, արխիվային նյութերը, փաստագրական բնույթի հուշագրությունները բացահայտում են Սարգիս Կուկունյանի կյանքն ու գործը, մի մարդու, որն առանձնակի հետք է թողել Հայ ազգային-ազատագրական պայքարի պատմության մեջ:

Հայդուկային խմբերի կազմակերպված անցումը դեպի երկիր կոչված էր ժողովրդին հանելու դարավոր քնից, նրան մղելու ազատագրական կռիվ: XIX դարի 80-ական թվականներին Արևմտյան Հայաստանի լեռներում առաջին զինավառ հայդուկների հանգես գալուց հետո արևելահայ երիտասարդությունը շրջանում սկսվեց մի ինքնաբերական շարժում, որի նպատակն էր անցնել երկիր և զենքով փրկել արևմտահայերի կյանքն ու արժանապատվությունը: Այդ շարժման նախակարգապետը Կուկունյանի արշավանքն էր:

Սարգիս Մովսեսի Կուկունյանը (Ավետիսյան) ծնվել է 1863 թ. հունվարի 23-ին, Նուխի գավառի Նիժ գյուղում, ուտիացի չքավոր ընտանիքում: Նախնական կրթությունը ստացել է գյուղում, ապա 1877թ. ընդունվել է էջմիածնի Գևորգյան ճեմարանը: Ուշիմ ու աչքաբաց Սարգսին չվիճակվեց ավարտել ճեմարանական դասընթացը. 1883թ. տեղի ունեցած աշակերտական խռովությունների պատճառով ճեմարանից հեռացվեցին շուրջ 80 աշակերտ, որոնց թվում էր Ե-րդ դասարանցի Սարգիսը, որն այդ ժամանակ դեռ կրում էր Ավետիսյան ազգանունը<sup>1</sup>: էջմիածնից Սարգիսը դնում է Երևան և փորձում մտնել Ուսուցչական սեմինարիա, բայց չի հաջողվում: Հորեղբոր աջակցությամբ նա տեղափոխվում է Թիֆլիս, մտնում զինվորական դպրոց, ուր երկար չի մնում և թողնելով այն, փորձ է անում ընդունվել Ներսիսյան դպրոց: Սակայն Ներսիսյան դպրոցի ղեկավարությունը Գևորգյան ճեմարանի վարչության կողմից արգեն տեղեկացված էր արտաքսվածների մասին և իր ձեռքի տակ ուներ նրանց անունները, որոնց թվում նաև Սարգսինը: Այդ ժամ նա դիմում է խորամանկության խնդրագիր ներկայացնելով Կուկունյան ազգանունով, ընդունվում Ներսիսյան դպրոցը և ուսանում Բաքվի «Մարդասիրական ընկերություն» նշանակած ամսական 10 ռուբլի նպաստով. 1884 թ. ավարտում է դպրոցը<sup>2</sup>:

1884 թ. Կուկունյանը մեկնում է Բաքու և մասնավոր դասեր տալիս: Այստեղ նրա մոտ առաջանում է բուռն ցանկություն մեկնել Պետերբուրգ և ընդունվել ուսուցչական ինստիտուտ: Մտադրություն

1 Տե՛ս Դիվան Լ. Յ. Դաշնակցության. հ. Բ, Իսուտն, 1934, էջ 7:

2 Հայաստանի պատմության պետական թանգարան (այսուհետև՝ ՀՊՊԹ), Վավե-րագրերի ֆոնդ, Դ. Անանունի արխիվ, մ.մ. 10795, № 832, թ. 2:

իրագործելու համար նյութական միջոցներ էին հարկավոր: Եվ Կուկունյանը դարձյալ խնդրանքով դիմում է Բաքվի «Մարդասիրական ընկերությունը»<sup>3</sup>: «Մարդասիրական ընկերությունը», երիտասարդ Կուկունյանի մեջ տեսնելով ապագա մանկավարժին հատուկ տվյալներ, որոշում է նրան ուղարկել Պետերբուրգ ուսման ասպարեզում կատարելագործվելու նախապես հոգալով ուսման ծախսերը (60 ռ. ճանապարհածախս և ամսական 15 ռ. նպաստ): Վառ հույսերով լի երիտասարդը մեկնում է Պետերբուրգ, բայց, չարագրացնելով իր մեկենասների հույսերը, ընդունվում է համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, որտեղ 2 ամիս սովորելուց հետո տեղափոխվում է արևելյան լեզուների բաժին որպես ազատ ունկնդիր: «Մարդասիրական ընկերությունը», այս մասին իմանալով, Կուկունյանին զրկում է թոշակից, սակայն վերջինս չի հուսահատվում, և սեփական աշխատանքով հայթայթում է իր ապրուստը:

Պետերբուրգում Կուկունյանն անմիջապես ընկնում է ազատամիտ երիտասարդության միջավայր, նրա մոտ խորանում են հեղափոխական տրամադրությունները, որոնք համակել էին նրա միտքն ու ոգին դեռ թիֆլիսում ուսանելու տարիներին: Հայ ուսանողությունն այդ ժամանակ, ինչպես հայտնի է, հիմնականում կենտրոնացված էր Մոսկվա և Պետերբուրգ քաղաքներում: Պետերբուրգի հայ ուսանողությունը որդեգրել էր շեշտված ազգային-քաղաքական ուղղություն: Այնտեղ արդեն լեզվագործունեություն էր սկսվել Հայաստանի ազատագրության օգտին. հրատարակվում էին փոքրածավալ գրքույկներ Բալկանների ապստամբական շարժումներից, արծարծվում էր երիտասարդության թուրքահայաստանացնելու դադափարը<sup>4</sup>: Ահա այդ միջավայրում էլ ձևավորվում է Կուկունյան հեղափոխականը:

Պետերբուրգի հայ ուսանողության մեջ առավել ազդեցիկ դեմքեր էին Կոստանդին Նատիսյանը, Արչակ Պարոնյանը, Ստեփան Թաղիանոսյանը, Թագևոս Զաքարյանը: Այս խումբը մայրաքաղաքի հայ ուսանողության ղեկավարն ու ոգին էր: Սա մի ժամանակաշրջան էր, երբ հայ կյանքն ու հատկապես մտավորական դասը երկու պատմական խոշոր դեպքերի՝ ռուս-թուրքական պատերազմի և Բուլղարիայի ազատագրության գործը ազդեցություն տակ էին: Ոգեշնչող էր մանավանդ բուլղարների օրինակը, որոնք երկարատև ու համառ պայքարով նվաճել էին իրենց անկախությունը: Նրանց օրինակն առաջ էր բերել Հայաստանը նույնպես թուրքական լծից ազատագրելու տրամադրություն: Եվ այդ գաղափարի իրագործման առաջին դրոշակակիրներից մեկը դարձավ Պետերբուրգի ուսանողությունը՝ հանձին Կուկունյանի:

Սաքգիս Կուկունյանը շուտով դառնում է Պետերբուրգի հայ ուսանողության կենտրոնական դեմքերից մեկը: Նա իր ջանքերով կազմակերպում է ուսանողական դրադարան, տարածում ազգային-ազատագրական գաղափարներ, հիմնում ուսանողների փոխօգնության ընկերություն, կապ հաստատում առհասարակ երիտասարդության, նարոդնիկների, իր սենյակում ապրող լեհ ուսանող Թեոդոր Բերդերի և բուլղար ազատամտարտիկների հետ, մասնակցում բուլղար ժողովրդի ազատագրական պայքարին նվիրված մի շարք գրքույկների թարգմանությունն ու հրատարակությունը («Պուկար Ավագակապետ», «Ազրայիլ», «Դանչո» և այլն)<sup>5</sup>: Այս գործը ղեկավարում էր լեռնարդյունաբերության գծով ինժեներ Կոստանդին Նատիսյանը:

Ուսանելուն զուգընթաց Կուկունյանն ազատ ժամերին պարապում էր զինավարժությամբ՝ իր ապագա գործունեության համար: «Նա մի տար-

3 Դ. Ա. և Ն. Ա. Ն. Սաքգիս Կուկունյանի հիմնավորը նամակները. — «Զիթենի» գրական ժողովածու, Թիֆլիս, 1915, էջ 239:

4 Տե՛ս «Հայրենիք», Բոստոն, 1923, N 5, էջ 27:

5 Տե՛ս Դիվան ՀՅԴաշնակցության. հ. Բ, էջ 8:

վա հասի դինավարժության դասեր առավ իր ընկեր և հետագա գործակից Լիսինյանի և Հովհաննիսյանի հետ: Առհասարակ, նա աշխատում էր ամեն տեսակետից պատրաստվել ապագա ազգային-հեղափոխական գործունեության համար»: Երկիր անցնելու գաղափարը բուռն կերպով համակել էր Կուկուցյանին, դարձել նրա մտասեռման առարկան: Պետերբուրգում Կուկուցյանը նաև ուրիշ կողմնակիցներ գտավ՝ գործակատար Ռուբեն Հովհաննիսյանին և պատրաստի հագուստի վաճառական Կոստանդին Լիսինյանին (սղնախեցի): Վերջինս իր ողջ կարողությունը վերածելով զրամի տրամադրեց Կուկուցյանին:

Երեք ընկերների ձևնարկը դուրս եկավ նեղ յրջանակից. նրանց շուրջը համախմբվեցին Պետերբուրգի հայրենասեր երիտասարդներից շատերը: Կուկուցյանը մինչ այդ Պետերբուրգում սերտ կապեր էր հաստատել ժամանակի պետական-հասարակական գործիչ Կարապետ Եզյանի հետ, օգնել նրան «Պետրոս Մեծի հարաբերությունները հայ ժողովրդի հետ» վավերագրական ժողովածուն կազմելու գործում: Եզյանը Հայաստանի անկախության վերականգնման հեռանկարը կապում էր Ռուսաստանի հետ և այդ նպատակով Կուկուցյանին առաջարկում է «...մեկնել Պարսկաստան, մտնել պարսից ծառայության մեջ, ստանալ խանի տիտղոս, իր Եզյանի աջակցությամբ հաստատվել թուրք-պարսկական սահմաններին մոտ և, բավականաչափ ուժ հավաքելուց հետո շարժումներ կազմակերպել Վասպուրականի մեջ: Ու կտա Կուկուցյանին հանձնարարականներ Պարսկաստանի մի շարք հայազգի բարձրաստիճան անձերու համար»<sup>6</sup>: Այս ծրագիրը սլահանջում էր անդադրում աշխատանք և պայքարի համեմատաբար երկար ժամանակաշրջան, մինչդեռ Կուկուցյանի համար Երկիր անցնելու ծրագիրը դարձել էր օրվա պահանջ:

1890թ. մայիսին, զինվելով Պետերբուրգում, Կուկուցյանն ու իր երկու ընկերները՝ Ռուբեն Հովհաննիսյանն ու Կոստանդին Լիսինյանը, մեկնում են Թիֆլիս, որտեղ նրանք գրկաբաց ընդունելություն են գտնում «Երիտասարդ Հայաստան» անունով գաղտնի ընկերության կողմից:

Թիֆլիսում Կուկուցյանն ու իր ընկերները 1890թ. հուլիսին այցելում են «Մշակի» խմբագիր Գրիգոր Արծրունուն: Վերջինս, ողջունելով Կուկուցյանի որոշումը, նրանց խորհուրդ է տալիս զինված խմբով անցնել Արևմտյան Հայաստան և մի քանի հարձակումներ կազմակերպել Հայկական գատր միջազգային ասպարեզ հանելու նպատակով: Արծրունու խորհրդով Կուկուցյանը սկսում է մշակել գործողությունների նոր ծրագիր, այն է՝ «Ջգնալ Պարսկաստան, ինչպես Եզյանն էր խորհուրդ տալիս, այլ ուղղակի մի քանի տասնյակ զինված մարտիկներով անցնել Տաճկահայաստան, այնտեղ յուրաքանչյուր տասնյակին տալ մի կարող խմբապետ և ուղարկել առանձին տեղեր. այդ տասնյակներն էլ իրենց հերթին պետք է ավելացնեն խմբի անդամների թիվը և 20-30 հոգի դառնալուց հետո, րաժանվեին նոր տասնյակների, և այդպես շարունակ, մինչև որ մի շողափելի ուժ կազմվեր: Այդպիսով, կազմված բոլոր խմբակների ցանցի

6 Հեղափոխական ալբոմ. Ազատագրական պայքարի հուշամատյան. Բեյրութ, 1962, N 2, էջ 35:

7 Մ. Վ ա Ր ա ն դ յ ա ն. Լ. Յ. Դաշնակցության պատմություն. Երևան, 1992, էջ 65:

\* «Երիտասարդ Հայաստան» կազմակերպությունը ստեղծվել էր Թիֆլիսում, 1889թ.: Այն հիմնականում կազմված էր Ռուսաստանի տարբեր քաղաքներում կրթություն ստացած երիտասարդներից: Այս խմբի գլխավոր անդամներն էին Հովսեփ Արղունյանը, Մարտին Շաթիրյանը, Յուսուֆյանը, Տիգրան Ստեփանյանը, Արշակ Թադևոսյանը, որոնք հարաբերություններ էին հաստատել ուսու նարողնիկական խմբակների և անհատների, ինչպես նաև նարողնիկական շարժման ազդեցության տակ գտնվող հայ երիտասարդների՝ Ս. Զավարյանի, Դաստակյանի, Բ. Միքայելյանի, Ակնունու, Կ. Խատիսյանի և ուրիշների հետ (տե՛ս. Լ. Չ ո Ր մ ի ս յ ա ն. Համապատկեր արևմտահայոց մեկ դարու պատմություն. հ. Բ(1878-1908 թթ.), Պեյրութ, 1974, էջ 286):

Հանգույցը պետք է գտնվեր Կուկուենյանի ձեռքին, որ պիտի ղեկավարեր կատարվելիք շարժումները»<sup>8</sup>:

Թիֆլիսում տարածում է գտնում Արևմտյան Հայաստան անցնելու Կուկուենյանի մտազրույցի մասին լուրը: Դիմումներ էին ստացվում Կուկուենյանի Հասցեով, գիմումատուները խնդրում էին իրենց ընդգրկել խմբի մեջ: Այդ օրերին Թիֆլիսում էր գտնվում անգլիական «Դեյլի Նյուս» թերթի թղթակից Ֆից-Ջերալդը, որը մոտ Հարաբերությունների մեջ էր Հայկական շրջանակների հետ, եկել էր ուսումնասիրելու նրանց արամազրույթունները և իր թղթակցություններով եվրոպական երկրների, մասնավորապես Անգլիայի Հասարակայնության ուշագրույթունը հրավիրելու Արևմտյան Հայաստանի վրա: Սարգիս Կուկուենյանը, Գրիգոր Արծրունու միջոցով ծանոթություն է հաստատում վերջինիս հետ: Ֆից-Ջերալդը ևս Հավանություն է տալիս Կուկուենյանի ծրագրերին, միաժամանակ խոստանալով իր հոդվածներով Հայկական հարցի վրա հրավիրել եվրոպայի ուշագրույթունը:

Կարինի 1890թ. հունիսյան գեպքերը (խոսքը Կարինի 1890թ. «Մեծ գեպք» մասին է) ոտքի հանեցին արևելահայ երիտասարդությանը: Կարինի արյունոտ իրադարձություններին հաջորդեց Գում-Գափուռի ցույցը Կ. Պոլսում՝ 1890թ. հուլիսի 15-ին: Այդ խոչոր իրադարձությունները ազդային զարթոնքի խթաններ հանդիսացան: Հարկավոր էր համախմբվել և իրական օգնություն ցույց տալ սահմանի մյուս կողմում գտնվող եղբայրներին՝ Հանգամանք, որը ծնունդ տվեց այն կենդանի շարժմանը, որն առաջնորդում էր Սարգիս Կուկուենյանը:

Թիֆլիսում Կուկուենյանի եղած ժամանակ այստեղ էր ժամանել նաև արևմտահայ հեղափոխական, տարոնացի Հակոբ Սարկավազը (Տեր-Ղևոնդյան): Նա հանգիպել էր Գրիգոր Արծրունուն՝ և նրան հավատացրել, թե Երկրում հազարավոր կտրիճ երիտասարդներ զինված սպասում են շարժվելու հրամանի: Սարկավազի և Կուկուենյանի ծանոթությունը կայացավ Գ. Արծրունու միջոցով: Վերջինս Կուկուենյանին խորհուրդ էր տվել Հակոբ Սարկավազին ընդգրկել իր խմբում իբրև երկիրը ճանաչող ու փորձված խորհրդատու, իբրև թիկնապահ՝ տալով զենք ու ձի<sup>9</sup>: Սարկավազը Կուկուենյանի համար կատարյալ հայտնություն էր, և նրանք միասին սկսում են ոչ մեծ խմբեր կազմել ու գաղտնի ուղարկել սահմանամերձ գավառները:

Ընդհանուր տրամադրությունն ազդում է նաև Հայ մեծահարուստների վրա, որոնք իրենց դրամական աջակցությունն են ցույց տալիս Կուկուենյանին: Մեծահարուստ Ծատուրյանի հրավերքի համաձայն Կուկուենյանը մեկնում է Բաքու, որտեղ «...Ծատուրյանը նրան ընդունում է շատ սիրով, տալիս 5000 ռուբլու չեկ, Թիֆլիսում, Մանթաշյանից գանձելի, և խոստանում իր ամբողջ կարողությունը նվիրել ազդին, եթե Կուկուենյանի սկսածը մի շոշափելի գործ դառնա»<sup>10</sup>: Վերադառնալով Թիֆլիս, Կուկուենյանը Մանթաշյանից ստանում է Ծատուրյանի նվիրած դրամարը, Մանթաշյանն էլ իր հերթին ավելացնում է 1500 ռուբլի՝ փոխարենը գնելով Կուկուենյանի գրադարանը:

Բնական է, որ Կուկուենյանի ողևորությունը պետք է անսահման լիներ: Նա սկսում է գեներ դնել, կամավորներ հավաքագրել իր շուրջը, որոնց թիվը օր օրի աճում էր և կհասներ մեծ չափերի, եթե Կուկուենյանը երկար մնար Թիֆլիսում: Թողնելով Թիֆլիսը, Կուկուենյանն իր աշխատանքները Կարսի շրջանում կենտրոնացնելու և սահմանը շուտ անցնելու նպատակով, Ղազախի և Լուովա վրայով անցնում է Ալեքսանդրապոլ: Ար-

8 Դիվան Լ. Յ. Դաշնակցության. հ. Բ, էջ 11:

9 Տե՛ս «Հայրենիք», 1937, N 5, էջ 140. — Արամայի Ազնավուրյանի հուշերը:

10 Նույն անդում, N 7, էջ 113:

11 Դիվան Լ. Յ. Դաշնակցության. հ. Բ, էջ 13:

շավանքի մասնակից Արամայիս Ազնավուրյանը իր հուշերում նշում է, որ, գալով Ալեքսանդրապոլ, Կուկունյանը գիշերում է Ալմոյանի իջևանատանը, իսկ առավոտյան նրան ներկայանում են ինքը՝ Արամայիս Ազնավուրյանը և երկու Արշակները՝ Արշակ Գաֆաֆյանը (Քեոի) և Ղարաբաղցի Արշակը, որոնք Հունոյի խմբի զինվորներից էին և կռվել էին Թեքեբինայի ու Մատոաբերդի շրջաններում: Զրույցի ժամանակ Ազնավուրյանը Կուկունյանին խորհուրդ է տալիս «չշտապել, յուրաքանչյուր քայլ կշռադատել, չխաղալ մի ամբողջ ժողովրդի բախտի հետ, զգուշությամբ մոտենալ Սուրբ Գործին»<sup>12</sup> և, մանրամասն նկարագրելով Հունոյի մղած կռիվները, Կուկունյանին տեղեկացնում է, որ «Ալաշկերտի գիծը մեր վարած կռիվների և ունեցած ընդհարումների պատճառով արդեն վտանգված է», և խորհուրդ է տալիս, որ «եթե Կուկունյանը Տաճկահայաստան պիտի անցնի իր խմբով, ապա պետք է ընտրե ուրիշ ճանապարհ»<sup>13</sup>:

Առարկելով այդ առաջարկին, Կուկունյանը հայտնում է իր որոշումը՝ երկիր անցնել Ալաշկերտի վրայով: Միաժամանակ, իրեն ներկայացած այս երեք երիտասարդներին ընդգրկում է իր խմբի մեջ՝ յուրաքանչյուրին տրամադրելով 20-ական ուղևորի: Ալեքսանդրապոլի գավառից Կուկունյանի խմբին զինվորագրվում են Սարդար Ավետիսյանը, Ղարաբաղցի Աբրահամ Աղամալյանը, բուլանդցի Նատո Շահնազարյանը, վանեցի Վարդանը, ախալցխացի Գրիգոր Հքմեճյանը, Արցախից Սահակ Մինասյանը, կարսեցի դարբին Ստեփանը, Ռուբեն Դերձակյանը և այլք: Խմբի կազմը խայտաբղետ էր. ուսանողական նստարանը թողած երիտասարդներ, հացթուխներ, գործակատարներ, հողագործներ, արհեստավորներ, որոնց մեջ չկար մեկը, որի տարիքը հասներ 30-ի: Նրանցից շատերն առաջին անգամ էին շփվում գեներալի հետ: «Մեզնից կարող եմ ասել, թե երեք մասը տղերքանց փափուկ ապրած տղերք են, ոչ բեռ չալակել տեսած են, ոչ անոթություն, ոչ այսպես երկար ճանապարհ քայլած ունեին: Բայց այն սերը, որ տպավորված էր անոնց սրտին մեջ, ոչ թե այն նեղություններ՝ այլ ամենայն սիրով մեռնիլ ազգի ազատության համար»<sup>14</sup>, - հիշում է արշավանքի մասնակից Մեսրոպ Վարդանյանը:

Խմբի նախապատրաստական աշխատանքները տարվում էին Ալեքսանդրապոլում և Կարսում: Կուկունյանը դարձել էր օրվա հերոս: Ընդհանուր ոգևորությունն ու խանդավառությունը համակել էր նաև կանանց, մայրերին և օրիորդներին: Քիչ չէին դեպքերը, երբ մայրերն իրենց որդիներին օրհնանքով հանձնում էին Կուկունյանին: Հաճախ խմբին զինվորագրվելու ցանկություն էին հայտնում հենց իրենք՝ կանայք: «Մի խումբ կանայք մատուցին խմբին, հանձինս մի Ռուբենի, մի զմայլելի ասեղնագործ դրոշակ, հայկական ազգային դրոշմանշանով և մի խումբ էլ մատղաշ օրիորդներ մետաքսից թելերով, դարձեալ ասեղնագործ, թեև մի քիչ փոքր, սակայն ավելի գրավիչ և խորհրդավոր ձիու վրա նստած ինքը Կուկունյանցը սուրը ձեռքին պարզած արշավում է դեպ երկիր»<sup>15</sup>: Կարսի օրիորդների Կուկունյանին նվիրած դրոշակի վրա 5 աստղերի մեջտեղում խոշոր տառերով դրված էր «61» հայկական 5 նահանգները և Բեռլինի դաշնագրի հայտնի հոդվածը խորհրդանշող, և «Մ. Հ.» (Մայր Հայաստան) տառերը, իսկ մյուս երեսին գրված էր ժամանակի սիրելի նշանաբա-

\* Նույն ինքը՝ Հարություն աղա, Հարություն Տեր-Մարտիրոսյան, ծնունդով վանեցի (տե՛ս Պատմագրություն Հայ Յեղափոխական Դաշնակցության պատմության. հ. Ա, Աթենք, 1990, էջ 115-117):

\*\* Մատոաբերդը գտնվում է էրզրումի նահանգի Բայազետի գավառում, Ալաշկերտից հյուսիս:

12 Տե՛ս «Արմենիա», Մարսել, 1891, N 39:

13 «Հայրենիք», 1937, N 4, էջ 145:

14 «Դրոշակ», Փարիզ, 1930, N 6-7, էջ 170:

15 Հայաստանի Հանրապետության պետական կենտրոնական պատմական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՊԿՊԱ), 1633, ց. 5, թղթ. 23, թ. 24:

նր՝ «վրեժ, վրեժ»: Շիրակի բնակչությունը կազմակերպում է նաև դրամահավաք, զենքի ու հագուստի հանգանակություն:

1890 թ. օգոստոսյան այս օրերին, երբ Կուկունյանի ձեռնարկը եռու են ընթացքի մեջ էր և որոշված էր արշավախմբի գործունեության ծրագիրը, կազմակերպչական վերջին աշխատանքներն էին տարվում և ուժերն արդեն կենտրոնացված էին սահմանազլխին, Թիֆլիսում նույն օրերին հայ ժողովրդի արևմտահայ հատվածի ազատագրումը հեղափոխական կռվի ճանապարհով լուծելու համար սլայքարող ուժերը միավորվեցին մեկ կուսակցության՝ Հայ Յեղափոխական Դաշնակցության մեջ: Նախ նշենք, որ Կուկունյանի արշավախումբը կազմակերպվել էր Գում-Դափուկի ցուլցի լուրն ստանալուց անմիջապես հետո, ՀՅԴ-ն կազմավորումից առաջ և վերջինից՝ անկախ: Իսկ երբ ՀՅԴ-ն ստեղծվեց, արդեն կազմված էին հայրենասիրական խմբակներ, Արևմտյան Հայաստանի կազմագրության երազը արդեն համակել էր երիտասարդությունը և այդ տրամադրության առաջին արտահայտությունն էլ դարձավ Կուկունյանի արշավանքը: Բնականաբար, Կուկունյանի ձեռնարկը չէր կարող անտեսվել ՀՅԴ կողմից: «Թիֆլիսի մեր ժողովի ամենակարևոր խնդիրներից մեկն էլ այն եղավ, որ Կուկունյանի ու Սարկավազի կազմակերպած հայդուկային արշավանքը նորակազմ ՀՅ Դաշնակցության ղեկավարության տակ առնվի»,- գրել է Ռուբեն Խան-Ազատը<sup>16</sup>: Իսկ սեպտեմբերին աշխատանքի անցած «Կենարոնը» կամ «Վարչությունը» սկսեց միջամտել արշավանքի նախապատրաստական աշխատանքներին: Նորակազմ կուսակցությունն իր առաջին լուրջ քննությունը համարելով խմբի կազմակերպման հետ կապված աշխատանքը, ամեն ինչ անում էր ոչ միայն նրա համալրման, այլև գործունեության անվթար ծրագիր մշակելու համար: «Կենտրոնի» աջակցությամբ լրացվում է խմբի կազմը, զենքի պակասը, բացի այդ որոշ քանակի ռազմամթերք ու հրացան է տրամադրվում: Ժողովուրդը ոչինչ չէր խնայում, ուտելիք ու հագուստ էր հասցնում խմբի անդամներին: Ողևորությունը Կուկունյանի խմբի շուրջ անսահման էր. «Ամենքը համոզված էին, որ Հայաստանը շատ շուտով պիտի փրկվի, և բոլոր դասակարգերը միացած էին «Սուրբ գործ»-ի շուրջը»<sup>17</sup>:

Սակայն շուտով տարածայնություններ սկսվեցին Կուկունյանի և ՀՅԴ Կարսի մասնաճյուղի միջև: Օգոստոսի վերջերին Կուկունյանը ստանում է մի նամակ «Վարչություն» ստորագրությամբ, ուր դրված էր, թե ուս կառավարությունը փոխել է իր քաղաքականությունը դեպի հայերը, սկսել է գործադրել որոշ խստություններ, աչքի ընկնող գործիչները հսկողության տակ են առնված, ուստի հարկավոր է հնարավորին չափ զգուշություն և ամենից առաջ անհրաժեշտ է գաղտնի պահել խմբի գտնվելու վայրը<sup>18</sup>: Եվ իսկապես, սկսվում են հետապնդումներ, և Կուկունյանն ու նրա թիկնապահները խուսափում էին իշխանությունների ներկայացուցիչներին հանդիպելուց, քանզի ձեռքակալվելու դեպքում պետք է դիմադրեին, որը կխանգարեր իրենց ծրագրերի իրականացմանը: ՀՅԴ-ն իր կազմավորումից անմիջապես հետո Կուկունյանի և Սարկավազի մոտ սուրհանդակ էր ուղարկել կուսակցության ծնունդը հայտնելու և խորհուրդ տալու, որ շտապեն անցնել սահմանը, որովհետև ուսական կառավարությունը կարող էր ձեռքակալել խմբի անդամներին: Բայց սուրհանդակը վերադարձավ հուսահատ, այն պատասխանով, որ Կուկունյանը չի շտապում սահմանն անցնել, պատճառաբանելով, թե խումբը դեռ վերջնականապես պատրաստ չէ: Դրանից 10 օր անց ՀՅԴ-ն Կուկունյանի խմբի նկատմամբ վերաբերմունքը կտրուկ փոխում է: Ինչ՞ն էր պատճառը: Նախ այն, որ «Կենարոնը» համաձայն չէր, որ Կուկունյանը ըաղմամարգ խմբով

16 «Հայրենիք», 1927, N 2, էջ 123:

17 Հուլիսի 1-ին 1927 թ. Հայ Դաշնակցության (1890-1950). հ. 1, Բոստոն, 1950, էջ 275:

18 Տե՛ս Դիվան ՀՅ Դաշնակցության. հ. Բ, էջ 13:

անցներ հրկիր: Սկսվում են հակասությունները ՀԹԴ Կենտրոնի և Կուկունյանի միջև: Ճիշտ այդ օրերին Կովկաս են վերադառնում Իշխան Հովսեփ Արղունթյանն ու ախալքալաքցի Մարտիրոս Մարգարյանը, որոնք Հ. Յ. Դաշնակցության ծնունդից առաջ գոյություն ունեցող «Երիտասարդ Հայաստան» դադարած միություն կողմից ուղարկվել էին Մուշ որպես Աբ. Կարապետի ուխտավորներ: Այս գույգ սուրհանգակները կամ առաքյալները, գաղտնի տեսակցություն էին ունեցել Մուշի Ղարախանյան նշանավոր վարդապետի հետ: «Լերջինս խնդրել էր հայտնել «Կովկասի գործիչներին», որ հայդուկային խմբեր չուղարկեն Երկիր, այլ սպասեն հարմար և պատեհ առիթի, որի մասին ինքը առաջնորդը լուր պիտի ուղարկեր»<sup>19</sup>: Այս տեղեկությունները ստանալուց հետո «Կենտրոնը» մի նոր պատվիրակություն է ուղարկում Կուկունյանի մոտ, այս անգամ համոզելու նրան, որ «առոյթ» սահմանը չանցնեն, այլ խմբի անդամներին ազատ արձակեն կամ էլ նրանց տեղավորեն մոտակա գյուղերում՝ խումբը չցրելու համար: «Դրությունը լրջանում էր. խմբի կազմության լուրը տարածվում էր, իսկ Կարսի նահանգապետն այն ժամանակ Տոմիչն էր, մի գազան մարդ և միաժամանակ սաստիկ հայատյաց: Ձգում էի, որ կամ պետք է խումբը ցրել կամ ուղարկել. նույնը պահանջում էր և Կուկունյանը, իսկ Թիֆլիսը կարգադրում էր ոչ ցրել և ոչ ուղարկել»<sup>20</sup>, - իր հուշերում գրել է Մարտին Շաթիրյանը:

Կուկունյանին և Սարկավագին համոզելու և նրանց ու «Կենտրոնի» միջև առաջացած տարաձայնությունները հարթելու նպատակով Կուկունյանին ներկայանում են նախ Կոստանդին Խատիսյանը, ապա Սիմոն Զավարյանը: Ձուր են անցնում Խատիսյանի պնդումներն ու պահանջները: Կուկունյանը մերժում է ենթարկվել «Կենտրոնի» հրահանգին, չկամենալով ճանաչել նրա գերակայությունը: Ավելացնենք, որ սրա գործադրած ջանքերն էլ իրենց նպատակին չեն հասնում և Զավարյանի այն բացատրությունը, թե խմբի վաղաժամ անցումը փոխանակ օգուտ տալու, կարող է գրգռել քրդերին և գրավել թուրքական կառավարության ուշադրությունը, Կուկունյանը պատասխանում է. «-Թող իմ արյունը ներկի Հայաստանի հողը, իսկ նրանից հետո ինչ ուզում է լինի»<sup>21</sup>: Զավարյանն էլ վերադարձավ ձեռնունայն, բայց Կենտրոնը դեռ երկար շարունակում էր նամակներով ու հեռագրերով համոզել Կուկունյանին սահմանը չանցնել և կամ շտապել անցնել օր առաջ: Կուկունյանին մտափոխել չի կարողանում նաև Իշխան Արղունթյանը, որը նրան փորձում է համոզել, որ Երկիրը պատրաստ չէ ապստամբության և հարկավոր է հավաքված զենքերն անցկացնել Արևմտյան Հայաստան, ժողովրդին աստիճանաբար զինել և Երկիր մտնել մի քանի հոգով՝ այն էլ պրոպագանդայի համար: Ապարդյուն են անցնում բոլոր հորդորները, քանի որ Կուկունյանը պնդում էր, որ պետք է սահմանն անցնել մեծ խմբով, մանավանդ որ հավաքվածներին ցրելը ընկճող տպավորություն կգործեր նրանց և հասարակության վրա<sup>22</sup>:

Անցնելով Կարս Կուկունյանը ազատամարտիկներին բաժանում է փոքր խմբերի և տեղավորում հայկական գյուղերում: Խմբապետի կարգադրությամբ խմբի մի մասը փոխադրվում է մոտակա Բերնա գյուղը, որտեղ մեկ շաբաթ մնալուց հետո տարբեր ճանապարհներով ուղղություն է վերցնում դեպի Շաղևան, մյուս մասը Սարիղամիշ-Կարակուրդ ճանապարհով հասնում է Չուրուկ և Արմուտլի՝ ապաստան գտնելով Բերնա գյուղի արևելյան կողմի ժայռերի այրերում:

Վիճահարույց հարցի շուրջ անախորժ տարաձայնություններ ծագեցին նաև Կուկունյանի և Սարկավագի միջև, դրա պատճառը կապ-

19 Տե՛ս «Հայրենիք», 1927, N 2, էջ 124:

20 Նույն տեղում, 1923, N 6, էջ 50:

21 Նույն տեղում, 1927, N 2, էջ 125:

22 Տե՛ս Դիվան ՀԹ Դաշնակցության. Հ. Ա., Բոստոն. 1934, էջ 10:

ված էր խմբի սահմանն անցնել-չանցնելու հետ: «Սարգիս Կուկունյան կը ջատագովեր այն միտքը,- գրել են Սարգիս և Միսակ Բղեյան եղբայրները,- թե պետք էր անցնեին Ալաշկերտ և այնտեղ խլրտում առաջ բերեին՝ Սարկավագեն գաղտնի, մինչգեռ Սարկավագի նպատակը բոլորովին տարբեր էր: Հակոբ Գալֆան (կառավարիչ, վարժապետ) կփափագեր երթալ Պոլիս ու Եվրոպա, և պրոպագանտ մղել ի նպաստ քյուրտերուն մոտենալու, անոնց միանալու, և անհրաժեշտ դեմք հայթայթելու անոնց հետ համագործակցություն առաջ բերելով միացյալ ճակատ ապահովելու, որուն շնորհիվ հնարավորություն պիտի ստեղծվեր դիմագրել թուրքին և ավելի հաջող ու ապահով պայմաններ ստեղծել»<sup>23</sup>: Երբ խումբը հասնում է սահմանագլխին, Սարկավագը Կուկունյանին հորդորում է, որ «...այսչափ մարդով չի կարելի անցնիլ սահմանը թմբկահարելով, որ պետք է ընտրենք տղերանցից գործին հմուտ և գործ տեսնողներ, մի քանի հոգով սուս ու փուս գնանք այնտեղ: Պետք է հանգամանքներուն համաձայն գործին: Մեղ հարկավոր է գենք և փող և մի քանի գործ տանող տղերք»<sup>24</sup>: Կուկունյանը, հակառակվելով նրան, պահանջում է. «80 հոգով արշավիլ և սահմանը անցնիլ, այնտեղ ազգաբնակչությունը ուզի-չուզի մեզ պիտի հետևի»<sup>25</sup>: Բայց Հակոբ Սարկավագն իր ասածը հիմնավորելով ավելացնում է. «Ազգաբնակչության ձեռքը գենք չկա, մինչև անգամ ինքնապաշտպանության համար. ինչո՞վ պետք է մեզ հետևի, բահով ու բրիչով»<sup>26</sup>:

Ինչևէ, մարտավարական լուրջ տարածայնությունները հանգեցրին Սարկավագի եղբերական վախճանին: Կուկունյանը, Սարկավագին համարելով իր կազմակերպած արշավանքի հակառակորդը, հանուն «սուրբ գործի» կարգադրում է մեջտեղից վերացնել նրան: Հակոբը սպանվում է դարաբաղցի Աբրահամի ձեռքով: Շարժման մասնակից Խ.-Գ. Կարեկցյանը հիշում է, որ հետագայում Աբրահամը մի քանի մարդկանց ներկայութեամբ պատմել ու լաց է եղել իր անգիտակից արարքի համար<sup>27</sup>: Նույն հուշագրի թողած տողերում կարդում ենք, որ Սարկավագին սպանելու շարժառիթը եղել է Կուկունյանի սին փառասիրությունը<sup>28</sup>: Հետագայում, աքսորում եղած տարիներին, Կուկունյանն էլ գիտակցելով իր անխոհեմ արարքը, հայրենիք վերադառնալուց հետո, արշավանքի մանրամասները պատմելիս, գղջումի ու ցավի խոսքեր է արտահայտել Սարկավագի մասին խոսելիս<sup>29</sup>: Իսկ Հակոբ Սարկավագի որդին՝ Արամը, հոր արժանապատվությունը վերականգնելու համար, 1906 թ. Խրիմյան Հայրիկի թաղման ժամանակ բազմության մեջ նկատելով Կուկունյանին (վերջինս արդեն վերադարձել էր աքսորից), հրավիրում է նրան ընկերական դատի, ուր «Հայ Ձեղափոխական Դաշնակցության կողմից թոփճյանի, Ջավարյանի և Առաքել Համբարձումյանի, հնչակյանների Աղայանի և Հայկունու կատարված քննությունը պարզում է, որ տարոնացի Սարկավագը զոհ է գնացել Կուկունյանի անձնասեր եսին: Կուկունյանը խոստովանեց, որ անմեղ տեղը սպանել է տվել Հակոբ Սարկավագին»<sup>30</sup>: Այնուհանդերձ, հիմնական պատճառը հայդուկային շարժման խնդիրների, գործելակերպի ու կազմա-

\* Հակոբ Սարկավագը մշեցի էր (Հակոբ Հարությունի Տեր-Ղևոնդյան, ծնված 1840 թ. Մշո Հարկնոց գյուղում):

<sup>23</sup> Սարգիս և Միսակ Բղեյան հեղինակներ. Հարազատ պատմություն Տարոնո. Գահիրե, 1962, էջ 76:

<sup>24</sup> Ե. Ջարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Բ. Նավասարդյանի ֆոնդ, Գ-3, Խաչատուր-Գևորգ Կարեկցյանի կենսագրությունը, թ. 51:

<sup>25</sup> Նույն տեղում:

<sup>26</sup> Նույն տեղում, թ. 52:

<sup>27</sup> Նույն տեղում:

<sup>28</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 51:

<sup>29</sup> Տե՛ս Դիվան ՀԹԴաշնակցության. Հ. Բ, էջ 5:

<sup>30</sup> Տե՛ս Սարգիս և Միսակ Բղեյան հեղինակներ, նշվ. աշխ., էջ 77:



կերպական հարցերի շուրջ եղած տարակարծությունն էր, որ երկու հակադիր բեկոններ մղեց Կուկունյանին ու Սարկավագին:

1890 թ. սեպտեմբերին Կուկունյանի խումբը սահմանագլխին սլաքատար էր արշավանքի, երբ Դաշնակցության Կարսի կենտրոնը դարձյալ առաջարկում է հետաձգել այն՝ նկատի ունենալով ցարական իշխանությունների աճող հետաքրքրությունն ու արդեն սարգորոջ նկատվող ձեռնարկումները: Իայց հետաձգելը կարող էր խորը հիասթափություն առաջ բերել հասարակության մեջ: Ավելին՝ «Կենտրոնը» մտադրվել էր Կուկունյանին բռնել, սպահել, բայց Կուկունյանը, չնայելով ընկերների հետ ընդհարումներին, հաստատակամորեն վճռում է ի կատար ածել իր առաքելությունը: Ջրնդունելով արված առաջարկները նա որոշում է անցնել սահմանը:

Սրտառուջ էր սահմանն անցնելու ժամանակ խմբին գյուղացիներից ու յոյց տված վերաբերմունքը, հուզիչ էր բաժանման տեսարանը: Խումբն իր հետ ուներ 2 դրոշակ, որոնցից մեկի վրա ձեռագործված էր Գրիգոր Լուսավորչի սլաքերը, իսկ մյուսի վրա մի առյուծ, ոտքի տակ էլ կիսալուսին: Խմբի անդամները իրենց ուսերին կրում էին դինվորական «էպոլետներ» ուսադիրներ «Մ. Հ.» տառերով, իսկ Կուկունյանն ու Սարգարը սպայի «Հազարապետի» ոսկեթել ուսադիրներ, որ նվիրել էին Կարսի օրիորդները: Ամբաստանագրում էլ ասված է, որ Սարգարը կրել է «39-րդ դիվիզիայի սպայի ուսադիրներ»<sup>31</sup>:

1890 թ. սեպտեմբերի 22-ին մոտ 110 հոգուց բաղկացած (20 ձիավոր) խումբը՝ հավաքվում է Շահեանում: Այստեղից անցնելով Քեակլիկ կիրճը, խմբի անդամները միանում են Բենա գյուղի արևելյան կողմի ժայռերի քարանձավներում ծվարած խմբի մյուս մասին Բասենի Չուրուկ գյուղում, որտեղից մեկնելուց առաջ Կուկունյանը խորհրդանշական ճառով դիմում է խմբին. «Մենք շուտով կը մտնենք Թուրքաց Հայաստան. լավ մտածեցեք. այնտեղեն վերադարձ չկա: Մենք կեղծանք մեռնելու որպեսզի ճանապարհ Հարթենք գալիք կռվող շարքերուն համար: Թո՛ղ ոչ ոք ձեզմե հույս ունենա, թե կարող է ողջ մնալ: Ով որ ատկե կը վհատի, թող այժմեն վերադառնա...»<sup>32</sup>:

Խումբը գնաց Թուրքական սահմանագլխին գտնվող լեռները: Երկուշարթի հասավ Թեքե-Բինա սարը՝ և արդեն գտնվում էր բուն տաճկական հողի վրա՝ Բասենի և Ալաշկերտի շրջանում, երբ քրդական Ախ-

\* «Մ. Հ.» տառերին տրվել են տարբեր իմաստներ: Արշավանքի մասնակից Ստեփան Ստեփանյանի (Բալաջան) կարծիքով դրանք նշանակել են «Մայր Հայաստան», ըստ Մեսրոպ Վարդանյանի՝ «Թիություն հայրենասիրաց», իսկ դատական ամբաստանագրում բացատրվել են որպես «Մայր Հայաստան»:

<sup>31</sup> Դիվան Է. Յ. Դաշնակցության. հ. Ա, էջ 35:

<sup>32</sup> Կուկունյանի արշավախմբի թվական կազմի վերաբերյալ հուշագրողների տվյալները տարբեր են. ձեռքակալվելուց հետո, հարցաքննության միջոցին Կուկունյանը հայտնում է (ըստ դատական ամբաստանագրի), որ խումբն ունեցել է 100 մարդ, այդ թվում 20 ձիավոր: Կոստանդին Լիսինյանի ցուցմունքներով 70 հոգի, Թուրքեն Հովհաննիսյանն էլ միևնույն թիվը մատնանշելով ավելացնում է «և 15 ձիավոր»: Արշավանքի մեկ ուրիշ մասնակից՝ Մեսրոպ Վարդանյանը, այլ թվեր է նշել. «Մենք մնացինք 78, մեզինք 24 ձիավոր էր» (տե՛ս «Դրոշակ», 1930, N 5): «Ոմանք խումբը հաշվում էին 120, ոմանք 150 հոգի, առում է մյուս մասնակիցը՝ Հովսեփ Մովսիսյանը. բայց փաստն այն է, որ մենք չհաշվեցինք վերջնականորեն, թե քանի հոգի էինք: Մոտ քսան հոգի ձիավոր էինք: Ձենքերը ես էի բաժանում: Ընդամենը հարյուր կտոր զենք էր: Ոմանք եկել էին իրենց զենքերով, ոմանք էլ վերադարձան զենք չլինելու պատճառով» (տե՛ս «Հայրենիք», 1934, N 4. — Հովսեփ Մովսիսյանի հուշերը, էջ 88): Արամայիս Ազնավուրյանի հուշերում խմբի կազմի վերաբերյալ ասված է հետևյալը. «Խումբը բաղկացած էր 85 հոգուց, որից 20-23-ը ձիավորներ էին» (տե՛ս «Հայրենիք», 1937, N 4, էջ 147): Մեզ համար ընդունելի է դատական ամբաստանագրին կից ամբաստանյալների ցուցակը՝ անուն-ազգանուններով և անձնական տվյալներով, ուր նրանց թիվը 117 է:

<sup>33</sup> Մ. Վ. ար. ա. ն. դ. յ. ա. ն. նշվ. ախս., էջ 69:

<sup>34</sup> Տե՛ս «Դրոշակ», 1912, N 6, էջ 166:

վարկ գյուղից խմբի գիմաց դուրս են գալիս 20 ձիավոր: Խմբի մարտիկների հաջողվում է գերել 2 քրգի, որոնց օգնությամբ էլ բարձրանում են Բոզ-Դաղ լեռը և դիրքավորվում<sup>35</sup>: Խմբին որսալու համար Թոփրակ-Կալեից ուղարկում են թուրքական ղինվորների կես վաշտ, բայց անօգուտ խումբը հեռանում է: Դեպքը տեղեկագրվում է իշխանության վերին ատյաններում և կազմակերպիչներին որակելով «չարագործներ», հրաման է արձակվում հետապնդել և ձերբակալել: Խումբն ընկնում է շրջապատման մեջ. երեք կողմից թուրքական ուժերն էին, իսկ չորրորդ կողմում՝ ուսական սահմանների երկարության կանգնել էին սահմանապահները: Երեկոյան թուրքական ուժերը սկսում են հետ քաշվել Ալաշկերտի ուղղությամբ: Կուկունյանի խումբը որոշում է շարժվել գեպի Մատուաբերդի բարձունքները, ուր մի որոշ ժամանակ առաջ եղել էր Հունոն իր խմբով<sup>36</sup>: Այստեղից, Արաքսի հովտով շարժվում են դեպի հայկական Խառ և Ղարաբաղ գյուղերը: Հետք չթողնելու համար խումբը սպանում է ճանապարհին հանդիպած մի քանի քրդերի:

Հրամանատարի և ուղեկցողների անփորձության հետևանքով խումբը չեղվում է Մատուա տանող ճանապարհից, և սարերում ու ձորերում երկար թափառելուց հետո նրա մի մասը հասնում է Խառ գյուղը (Կաղզվանի շրջանում) և տեղավորվում հանգստանալու գյուղի այգիներում, իսկ մյուս մասը ցրվում է դանաղան ուղղություններով: Բայց Խառ իջնող խումբը նկատվել էր Կաղզվանի թուրքերի կողմից, որոնք գզուշացրել էին դավառապետին: Աինչ Կուկունյանն իր զինակիցներով հանգստանում էր Խառի այգիներում, գավառապետի օգնական Կուզուշևը 15 զինվորով վրա է հասնում խարույկի շուրջ հանգստացող խմբին: Սկսվում է ընդհարում ուսական զինվորների ու խմբի անդամների միջև: Կաղզվանից ուղարկվում են օգնական ուժեր՝ մեկ դուամարտակ զինվոր, հարյուր կողակ, մեկ հարյուրյակ սահմանապահ և Դերբենդյան գնդի որսորդական մի խումբ<sup>37</sup>: Զորամասերը շրջապատում են Խառ և Ղարաբաղ գյուղերի բարձունքները: Կողակների խումբը առաջնորդում էին հայ զինվոր Մարտիրոսյանը և գյուղի մուխտար Գրիգոր Ոսկանյանը, որոնք և բանակցություններ են սկսում խմբի հետ՝ առաջարկելով զինաթափվել: Առաջարկը մերժելուց հետո տեղի է ունենում փոխհրաձգություն, վիրավորվում է մեկ կողակ: Գապիտան Կուզուշևը խմբին մի ամբողջ օր սլանում է շրջապատման օղակի մեջ, մինչև որ հաջորդ օրը ժամը 12-ին Կաղզվանից օգնության են հասնում Դերբենդյան 154-րդ գնդի մի վաշտ և մի ջոկատ էլ կարսյան սահմանապահ գնդից: Խմբի անդամների դրությունը դառնում է օրհասական, նրանք հայտնվում են անելանելի վիճակի մեջ, քանի որ մտադրություն չունեին կռվելու ուսական ղինվորների դեմ, մինչդեռ վերջինները, օղակը սեղմած պահելով, սկսեցին խուզարկություններ ու ձերբակալություններ: Կուկունյանը խմբի տղաներին առաջարկում է իբրև ուսահպատակներ հանձնվել՝ առանց որևէ դիմադրության, համոզված լինելով, որ ուսական կառավարությունն իրենց ոչինչ չի անի, քանի որ շարժումն ուղղված է ոչ թե Ռուսաստանի, այլ թուրքիայի դեմ: Չնայած դրան, տղաների մի մասը, այնուամենայնիվ, դիմադրություն է ցույց տալիս, իսկ մնացածները դիմում են փախուստի: Դիմադրողների թվում էին Սարգարը, երկու Աբրահամները, բաշթյադիկլարցի Մուկուշը, որոնք, ուսական կառավարության կողմից դատապարտված լինելով տաժանակիր աշխատանքի, խիստ դեմ էին ուսաներին հանձնվելու առաջարկին: Սրանք, իրենց ձեռքը հեծած, կրակ արձակելով կողակների շղթայի վրա, անվտանգ կտրելով այդ շղթան, դիմում են փախուստի: Նրանց օրինակին հետևում են Քեռին, Ղարաբաղցի Աբրահամը, Արամայիս

35 ՀՀ ՊԿՊԱ, 1633, ց. 5, գ. 21, № 83:

36 Նույն տեղում, N 84:

37 Տե՛ս նույն տեղում, N 83:

Աղնավուրյանը և մի քանի հետևակ զինվորներ, որոնք ապաստան են գտնում Չերմայի գյուղում (Կարսի շրջան), որտեղից էլ հաջորդ օրը դադարի տեղափոխվում են Կարս: Խմբի անդամներից սպանվում են Լըզրու մցի զարրին Ստեփանը և մշեցի Նատոն: Դատական ամրաստանագրի տվյալներով կորուստները Կուկունյանի խմբից կազմել են 4 հոգի (որոնց մեջ նաև զինվորական ղեկավար Սարգար Ավետիսյանը), 1 կոզակ, 10 քուրդ և թուրք: «Բոլորին ձերբակալելուց հետո, կառավարությունը գրավում է 28 բերդան հրացան, 2 վենչետրի, 2 Պիրոլի, 4 Շեդդերի և այլ հրացաններ: Միաժամանակ վերցնում են 11 դաշույն, 2 սուր, 6 սվին, 1 ատրճանակ, 24 յափուռնի և 6 պալուսակ՝ փամփուռներով լիքը»<sup>39</sup>:

Սյսպիսի տխուր ու ողբերգական վախճան ունեցավ Կուկունյանի Ղլխավորած արշավանքը ղեկի Երկիր:

Ձերբակալվածներին նետում են Կաղզվանի բանտը՝ Կուկունյանին բանտարկելով առանձին սենյակում, մյուսներին երկու սենյակում, ուր տղան էլ նույն մեկ ամիս: «Կարծում էինք, թե այսօր վաղը մեզ կարձակեն,- վերհիշել է արշավանքի մասնակից Հովսեփը: -Շատ միամիտ էինք և անփորձ: Մեր անփորձությունը հասնում էր հիմարություն: Միայն մի ոստիկան էր զրկված մեզ հսկելու և կամերայից դուրս բերելու համար: Նա էլ ամրոզը օրը նստած տեղը մրափում էր. և ոչ մեկիս մտքովը չանցավ փախչել, չնայած որ այդքան հեշտ էր փախչելը»<sup>40</sup>: Դադարանցի սահակապետ, փոխղլխավոր Սեյիդ Հուսեյնը բանտարկյալներին Կարս հասցնելուց հետո իր հատուկ շնորհակալությունն է հայտնել Կուկունյանին, որը, փախուստի ամեն հնարավորություն ունենալով հանդերձ, ասպետորեն սյահել էր իր պատվի խոսքը: Մինչդեռ Կուկունյանը չէր կամեցել փախչել, որպեսզի հնար ունենա դատավարության ժամանակ պաշտպանել Հայոց դատը: Ավելին, նա իր սպիտակ ձին տվել էր դարաբաղցի Աբրահամին, որը փախել էր դարաբաղցի Ջաբարի, Սարգարի և այլքսանդրապոլցի Մուկուչի հետ: Վերավոր Ջաբարին թողնելով Ղազարապատում՝ Վասակի տանը, երեք ընկերներով բարձրանում են Առագածի փեշերը և ապաստան գանում իրենց ծանոթ քրդերից մեկի մոտ: Սակայն քրդերը գիշերվա ուշ ժամին մորթում են Մուկուչին ու Սարգարին: Իրեն մոտեցվող արյունոտ դանակի հոտից, թե մորթվող ընկերների խոխոռոցից Աբրահամը արթնանում է, բարձի տակից հանում ատրճանակը և երկու քուրդ սպանելով նստում ձին ու փախչում<sup>40</sup>: Սրտացավ դարաբաղցին լսելով, որ Կուկունյանն իր ընկերներով ձերբակալված է և պետք է նրանց Կարսից թիֆլիս տեղափոխեն, որոշում է Դիրլջանում հարձակվել խմբին ուղեկցող ոստիկաններին վրա և ազատել ընկերներին: Բայց զա Աբրահամին չի հաջողվում. Նոր-Բայազետում 1891թ. հունիսի 18-ին նա մատնությունը ձերբակալվում և տեղափոխվում է Կարսի բանտ, ուր Կաղզվանից փոխադրվել էր Կուկունյանն իր բախտակիցներով:

Կարսի բովանդակ հայությունը սիրով ու ակնածանքով ընդունեց ձերբակալվածներին: Հուշագիր Մարտին Շաթիրյանի ասելով, «երբ բանտարկյալներին դուրս էին բերում բաղնիք տանելու համար, այդ օրը քաղաքը ստանում էր կես-տոնական, կես-սուղի կերպարանք: Շատերը խանութները փակում էին: Երեխաների փոքրիկ խմբեր սկսում էին «Մեր Հայրենիք» երգել: Կալանավորները ձայնակցում էին նրանց, և այդպիսով բաղնիք գնալը ստանում էր քաղաքական ցույցի բնույթ»<sup>41</sup>: Կուկունյանի խմբի մասնակիցներից մշեցի Մեսրոպը, որին Խառից հաջողվել էր փախ-

38 Գ. Ն ո ղ ա ն. Դրվագներ ՀՅԴ գործունեությունից. Բոսթըն, 1917, էջ 89:

39 «Հայրենիք», 1934, N 6, էջ 58:

40 Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, 1633, Գ. 5, թղթ. 23, էջ 169:

\* Աբրահամն այստեղից փախչելու փորձ է անում, բայց սպանվում է բանտի պարիսպների տակ բանտապահ ռուս կոզակի արձակած գնդակից:

41 «Հայրենիք», 1923, N 5, էջ 51:

չել, անցնել Կարս և ականատես լինել իր ընկերների Կարս բերելուն, գրում է. «Սարգիս Կուկունյանի Կարս բերած օրը Կարսի հայությունը բոլոր խանութները գոցած էր: Ժողովուրդը խոնված էր ճանապարհին, փողոցներում, տանիքների վրա: Կառավարութունը թույլ չէր տալիս, բայց նրան լսող չկար: Շատերը խումբ-խումբ կերթային Կողբի մոտ ճանապարհը, որտեղից պիտի բերեին բանտարկյալները... Կեսօրից հետո, հեռուները երևացան բանտարկյալները: Կուկունյանը կը քալեր առջևն. տղերքը բոլորը շղթայակապ էին, շրջապատված էին ոստիկաններով, կողակներով ու հետևակ զինվորներով: Երբ խումբը մոտեցավ ժողովրդին, ժողովուրդը շատ տրտում, տխուր էր, բայց խումբի տղերք ուրախ էին: Կրկին ժողովուրդը խումբին կը հուսադրեր: Ու, հանկարծ, բազմութունը օգր թնգացուց «կեցցե՛»-ներով և այգպես «կեցցե՛» աղաղակելով հետևեց մինչև բունտ»<sup>42</sup>:

1890 թ. սեպտեմբերի 25-27-ը Կուկունյանի խմբից ձերբակալվածների թիվը 43 էր: Երկար ճգճելուց հետո միայն 1892 թ. ապրիլի 7-ին սկսվում է ձերբակալվածների գատավարութունը Կարսում, ուր տեղափոխվել էր Երևանի նահանգային դատական ատյանն իր ողջ կազմով: Դատական պրոցեսը տևում է մոտ մեկ ամիս: Մինչ այդ, գործը քննվել էր Ժանդարմական վարչության կողմից, որը գործին տալով քրեական բնույթ, մասնակիցներին մեղադրել էր այն ամբաստանությամբ, թե նրանք զինված արշավանք են ձեռնարկել և ոճիրներ գործել: Վարչութունը գործը հանձնել էր Երևանի շրջանային դատական ատյանի առանձին գործերի քննիչ Բազարովին, որին ղեկավարում էր դատախազի օգնական Սուրինը: Կուկունյանի խմբի տղաների պաշտպան փաստաբանն էր Գաբրիել Մնացականյանը, որն ամբողջ դատավարության ընթացքում չի պաշտպանել մեղադրյալներից ոչ մեկին, ասելով. «Ձեր վճիռն արդեն կայացել է, սրանք առերևույթ ձեռնարկութուններ են»<sup>43</sup>: Խմբի ձեռնարկած գործը չհամարելով քաղաքական, որդեգրվեց այն տեսակետը, թե խումբը քրեական գործ է կատարել, ազգային վրեժխնդրությունից դրդված զինված դիմադրութուն է ցույց տվել իշխանություններին: Քննիչներն ու դատավորներն ամեն ջանք գործադրեցին խեղաթյուրելու արշավանքի նպատակը՝ ցանկանալով ցույց տալ, թե գործողութունն ուղղված էր նաև Ռուսատանի դեմ:

Դատախազության կողմից կանչվել էին շուրջ 350 վկաներ, մեծ մասը քրդեր ու թուրքեր, կանչվել էին նույնիսկ թուրքիայից: «Այնպիսի վկաներ երևացին, խոսեցին ու վկայեցին, որ մենք չէինք էլ տեսել, ամեն մեկիս տվել էին 200 էջանոց մեղադրական ակտ»<sup>44</sup>, - իր հուշերում գրել է արշավանքի մասնակից Հովսեփ Մովսիսյանը:

Ինչպես նշվեց, ամբաստանյալների նախնական քննությունը տևեց շուրջ մեկուկես տարի, որի արդյունքում ձեռք բերված տվյալներով գործում ներգրավվել էին 107 մեղադրյալ, որոնցից 28-ը դատարանի կողմից որակվել էին որպես առավել վտանգավոր հանցագործներ<sup>45</sup>: Պարզելով Երկիր անցնելու իրենց նպատակը, ամբաստանյալները դատարանից պահանջում էին, որ իրենց գործին քաղաքական բնույթ տրվի: Բայց ցարական դատարանն այդ տեսանկյունից չմոտեցավ գործին, և կեղծ օրինականությունները վերջացան մի ձեռնարկ ակտով՝ 1892 թ. մայիսի 7-ին Երևանի շրջանային դատարանը կայացրեց իր որոշումը և դատարանի նախագահ Բազարովը կարգաց մեղադրական ակտը, ըստ որի, համաձայն քրեական օրենսգրքի 208, 214, 262, 269, 1271 և 1459 հոդվածների, արշավախմբի

42 Մեսրոպ Վարդանյանի հուշերը Կուկունյանի արշավանքի մասին (տե՛ս «Դրոշակ», Փարիզ, 1930, N 6-7, էջ 173):

43 «Հայրենիք», Բոստոն, 1934, N 6, էջ 116:

44 Նույն տեղում:

45 ՀՀ ՊԿՊԱ, 4033, ց. 5, գ. 21, էջ 20:

մասնակիցները ղիտվեցին որպես չարագործներ, մարգասպաններ և պետական իշխանություններին դիմադրողներ

Ցարական չինովնիկներին գրգռել էին նաև կամավորների ուսադիրներին եղած «Մ. Ն.» տառերը, որոնք դատախազի կողմից ներկայացվեցին «Միացյալ Հայաստան» նշանակությամբ, մինչդեռ մեղադրյալների բնորոշմամբ ունեին «Միություն Հայաստանի» նշանակությունը: Հավանարար, դատախազը վճռել էր խիստ վերաբերմունքով միանգամից արմատախիլ անել «Միացյալ Հայաստանի» գաղափարը: «Հայերը միացյալ Հայաստան են երագում», - շտապեց եզրակացնել կարճամիտ պաշտոնեությունը: Այդ «դավաճանական գործին մեղսակից էր համարվում նույնիսկ էջմիածնի միարանությունը՝ սկսած կաթողիկոսից, և՛ ահա զբարեբանությունների մի մեծ շարան սկսվեց Երևանի նահանգային դատարանի, Թիֆլիսի դատաստանական սլախտի դատախազների և արգարագատություն նախարարի միջև»<sup>47</sup>:

Կառավարության ու դատարանի որոշումը դաժան էր, և առաջին ծանր հարվածն էր աղատագրական շարժմանը: Խմբապետ Սարգիս Կուկունյանը ստացավ 20 տարվա տաժանակրություն, որից 7 տարին շղթայակապ, ապա մշտական աքսոր: Խմբի անդամներից 19-ը, այդ թվում Ստեփան Հարությունյանը (Բալաջան), Կոստանդին Լիսինյանը, Խուրեն Դերձակյանը ստացան 15 տարվա, մեկը՝ 12 տարվա, 4-ը՝ 8 տարվա, մեկը՝ 3 տարվա բանտարկություն: 43 ձերբակալվածների ազատագրման ընդհանուր ժամկետը կազմեց 422 տարի<sup>48</sup>: Շրջանային դատարանի վճիռը ցնցեց բազմությունն ու դատապարտյալներին: Վերջիններս բողոք ներկայացրեցին դատաստանական պալատի վճռաբեկ ատյանին:

1892 թ. սեպտեմբերի 20-ին դատապարտված 26 հայրենասերներին Կարսից տեղափոխում են Թիֆլիս, ուր պիտի վերաքննվեր նրանց դործը: Մինչև 1894 թ. հունվար ամիսը բանտարկյալները պահվում են Թիֆլիսի բանտում, որտեղից փոխադրվում են Օրթաճալայի կենտրոնական նահանգային բանտ, իսկ այնուհետև 2 ամիս անց՝ Մետեխի բանտ սպասելով վճռաբեկ ատյանի որոշմանը, բայց ապարդյուն: Թիֆլիսի դատաստանական սլախտը 1893 թ. մայիսի 26-ին մերժում է վերաքննել դործը, որից հետո այն տեղափոխվում է Սենատ, որը 1894 թ. հունվարի 28-ին անփոփոխ է թողնում Երևանի շրջանային դատարանի որոշումը:

1895 թ. մարտի 1-ին բանտարկյալները շղթայակապ աքսորվում են Սիրիբ: Սախալին մեկնողներին բերում են Խարկով, այնտեղից Օդեսա, ապա «Յարոսլավլ» նավով Սուեզի, Ադենի, Սինդապուրի, Նադասակիի և Վլադիվոստոկի վրայով տանում Սախալին: «Անոնք այլևս մարդիկ չէին օրենքի առաջ, անոնք կենդանի մեռածներ էին...», - դրել է հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչներից Մալխասը:

1910 թ. Բաքվում լույս է տեսնում Կուկունյանի «Վերջին օրերս Սախալինում» փոքրածավալ գրքույկը, որը պատմությունն է հեղինակի սախալինյան դժնդակ տարիների: Անշուշտ, Կուկունյանը համեմատաբար տանելի վիճակում էր գտնվում տաժանակրության վերջին շրջանում, քան իր բախտակիցները: Սախալինյան պայմաններում նա պահպանում է իր ոգու կայունությունը, տեղի ճապոնացիների, ապա նաև աքսորված տաժանակիրների երեխաներին ռուսերեն է սովորեցնում չնչին վարձատրությամբ, այն էլ՝ մթերքներով: Ավելացնենք, որ Կուկունյանի կացությունն ավելի մեղմեց կղզու դեներալ-նահանգապետ Լյապունովի

46 Նույն տեղում, էջ 138:

47 ՀՀ Հասարակական-քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի կենտրոնական արխիվ, ֆ. 4047, ց. 25, գ. 9, էջ 51:

48 ՀՊՊԹ, Վավերագրերի ֆոնդ, Դ. Անանունի արխիվ, 55.10795, N 832, թ. 8:

49 Նույն տեղում, թ. 7:

50 Մալխաս. Ապրումներ. Հ. Ա. Թեհրան, 1982, էջ 134:

կողմից նրան կառավարական ապարանում կառավարիչ նշանակելու բարեբախտ դիպվածը: Իեռ ուսանողական տարիներից ծանոթ լինելով տպարանական դործին, Կուկունյանը կարճ ժամանակում կանոնավորում է տպարանի աշխատանքները: Քննելով Կուկունյանի մեկ տարվա դործունեությունը, Լյապունովն աքսորականին իր գոհունակությունն է հայտնում բարեխղճության համար, կարգադրում է նրան նշանակել ամսական 30 ռուբլի աշխատավարձ: Կուկունյանը Սախալինում սովորում է ճապոներեն:

1904թ. սկսված ռուս-ճապոնական պատերազմը փոխում է իրավիճակը: Ամեն ինչից ղրկված, տաժանակրություն մեջ տառապող մարդիկ ցանկանում էին ազատվել Սախալինի դժոխքից: Կուկունյանը դրվում է կամավորների ցուցակում՝ շուրջ 8000-9000 հոգի, որոնց գինում են բերդանկաներով ու միացնում տեղական զորքերին: Նրանց ընդհանուր հրամանատար է նշանակվում դեներալ-լեյտենանտ Լյապունովը<sup>51</sup>: Իբրև տպարանի կառավարիչ ու կամավոր Կուկունյանը պետք է գտնվեր տպարանում, տպագրեր հրամաններ ու հրահանգներ:

Ճապոնացիների կողմից Սախալինը գրավելու ժամանակ կամավոր գինվոր Կուկունյանը հրաշքով ազատվում է դատաստանից. պատահաբար նրան ճանաչում է մի ճապոնացի սպա, որի հետ աքսորյալ Կուկունյանը ռուսերեն էր պարապել: Սպան հայտնում է, որ Կուկունյանը քաղաքական աքսորական է և Սախալինում է գտնվում իր ժողովրդի ազատության համար պայքարելու պատճառով: Նրան առաջարկում են անցնել Ճապոնիա, գնալ Նագասակի և տեղի ուսումնարանում աշխատել որպես ռուսաց լեզվի ուսուցիչ: Կուկունյանի հետ էին նրա երեխաներն ու կինը: Վերջինս հայ էր, Կուկունյանի հետ ծանոթացել ու ամուսնացել էր աքսորավայրում նրան պարզեցրելով 5 երեխա<sup>52</sup>: Կուկունյանը ճապոնացիների առաջարկին տալիս է երկիմաստ պատասխան, քանի որ նրա իզձը հայրենիք վերադառնալն էր:

Սարգիս Կուկունյանը Սախալինում մնաց մինչև 1906 թ. հունիսը<sup>53</sup>: 1904-1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմին կամավորադրված աքսորյալների ներման մանիֆեստի համաձայն կառավարությունն այլոց հետ ներում չնորհեց նաև հայ աքսորյալներին: Կուկունյանը վերադառնում է հայրենիք:

1906 թ. օգոստոսին Սարգիս Կուկունյանը Թիֆլիսում էր, իսկ հոկտեմբերի 30-ին գալիս է հայրենի Նիժ գյուղ, որտեղից հեռացել էր 21 տարի առաջ: «Հետագային, 16 տարի վերջը, ես նորից տեսա Կուկունյանը, երբ նա ազատվելով ռուսական տաժանակիր բանտից և Սախալին կղզու աքսորից՝ եկավ Կովկաս, սպիտակ մագերով ու մորուքով, բավական գիրքացած ու դանդաղաչարժ, խոհուն ծերունի մը, որ հեռավոր իսկ նմանությունը չունեի այն երիտասարդի հետ, որ տեսած էի առաջին անգամ և մասնավոր սիրով պահած հիշողությունս մեջ»<sup>54</sup>, - դրել է Համո Օհանջանյանը: Նիժի հասարակությունը գրկաբաց ընդունեց իր տառապյալ զավակին՝ կազմակերպելով փառավոր ընդունելություն:

Նիժը խոշոր գյուղ էր և ենթարկված սոցիալական շերտավորման: Ջրավորներն ու հարստահարվողները հանձինս «Սարգիս-աղի» (Կուկուն-

51 Տե՛ս Ս. Կ ու կ ու ն յ ա ն. Վերջին օրերս Սախալինում. Բաքու, 1910, էջ 91:

52 «Հայրենիք», 1934, N 8, էջ 101:

53 Բանտարկյալներից մի քանիսը հաջող փախուստ կազմակերպեցին. եփրեմ Դավթյանը փախավ 1895 թ. մայիսի 27-ին և 18 ամիս դեգերելուց հետո Պարսկաստան հասավ 1896 թ.: Ստեփան Հարությունյանը (Մերունի) 1898 թ. անցավ Պարսկաստան: Վիրապ Դաշյանը 1899 թ. ամռանը դիմեց փախուստի և վախճանվեց 1900 թ. մայիսի 3-ին: Ողբերգական վախճան ունեցավ Կոստանդին Լիսինյանը: Նա փախավ և մահացավ Չիտա քաղաքի մոտակա անտառներում: Այս մասին առավել մանրամասն տե՛ս ՀՊՊԹ, Վավերագրերի ֆոնդ, Դ. Անանունի արխիվ, N 832, թ. 17: «Հայրենիք», Բոստոն, 1934, N 9, 10, 11:

54 «Հուսարբեր», 1940, դեկտեմբերի 7:

յանի) գտնում են իրենց պաշտպանին: Նրանք գանգատվում էին. թե պարտաբի դիմաց գյուղի ցեղերը խոշոր տոկոսներ են վերցնում իրենցից իրում արտերն ու այգիները, վերջին ունեցվածքն ու կուպեկները: Այստեղ էլ սկսվում է Կուկունյան մարտիկի երկրորդ ողբերգությունը պայքար ներքին Հարստահարիչների դեմ: Կուկունյանի ազնիվ հոգին փոթորկվել էր այն աստիճան, որ նա գյուղի կուլակներին սպառնում էր «զնդակների բաժին դարձնել», եթե չզաղարեցնեն իրենց անմարդկային արարքները: Այս բմրոստ վերաբերմունքը ոգի ներշնչեց չքավորներին և նրանք, միացած գյուղի աչքարաց ու սրտացավ մարդկանց, Հասարակական պայքար են ծավալում ընդդեմ Հարստահարիչների: Դրա արդյունքն էր 1907 թ. սկսվածներին Նիժում կաղմակերպված «Գյուղացիական միությունը», որն ընդգրկել էր 600 մարդ և գործում էր ցաղտնի՝ ըոյկոտի միջոցով տնտեսական պայքար մղելով կուլակների դեմ<sup>55</sup>:

1908 թ. մարտին Նիժում ստեղծվում է մեկ այլ նմանատիպ Հասարակական կաղմակերպություն, որը Կովկասի «Հայոց բարեգործական ընկերություն» մասնաճյուղն էր: Կուլակները, չհանդուրժելով ժողովրդական այդ կաղմակերպության «Գյուղացիական միություն» դոյությունը, որոշում են արգելել նրա գործունեությունը և այդ նպատակով դիմում են մատնություն: 1909 թ. հունվարին Նիժում տեղի են ունենում մասսայական ձերբակալություններ, իսկ փետրվարի 6-ին Բաքվում ձերբակալվում է Սարգիս Կուկունյանը, որի անունը մատնիչները սերտորեն կապում էին «Միություն» հետ: Իշխանությունները չկարողանալով որևէ մեղադրանք ներկայացնել, երևա ամիս բանտում պահելուց հետո ձերբակալվածներին ազատ են արձակում: Բայց Կուկունյանը հինգ հոգու հետ շարունակում է մնալ կալանված, ապա ենթարկվում են վարչական տարագրության՝ 5 տարի ժամանակով (Կովկասի փոխարքայի որոշումը 1910 թ. օգոստոսի 19-ին): Կուկունյանին երեք ամիս բանտում պահելուց հետո իշխանությունը որոշում է նրան 5 տարով Թոստով տարագրել, բայց հայ գործիչների միջամտության շնորհիվ նա ազատվում է քսորից:

1910 թ. հոկտեմբերի 15-ին Նիժում, տեղական տանուտերի ցուցմունքով, ձերբակալվում է 8 հոգի՝ 2 նիժեցի, 6-ը՝ դրսից: Ձերբակալվածների մոտ հայտնաբերվում են ռուբեր ու այլ գներ: Առանց պարզելու իսկությունը, իշխանությունը ձերբակալվածներին հեղափոխականներ ճանաչեց նրանց անձն ու դործը կապելով Կուկունյանի հետ, մեղադրանք հարուցելով, թե իբր նա է նրանց Բաքվից Նիժ ուղարկել՝ վախատուններին պատմելու հրահանգով: Վերջիններիս դրամամբ 1910 թ. հոկտեմբերի 18-ին Բաքվում Կուկունյանը ձերբակալվում է: Դատը կայանում է Գանձակում 1911 թ. նոյեմբերի 7-ին: Դատական պրոցեսը վարում էր Թիֆլիսի դատաստանական պալատը: Դատավարության ընթացքում մեղադրյալները հրաժարվում են Կուկունյանի անունը կապել իրենց հետ: Չնայած դրան, ցարական դատարանը Կուկունյանին դատապարտեց 15 տարվա տաժանակիր աշխատանքի, նրա հետ դատապարտվողներից 5-ը ստացան 8, 3-ը՝ 5 տարի 4 ամսվա տաժանակրություն<sup>56</sup>:

Այս վճռից հետո Կուկունյանը նստում է Գանձակի բանտում, որտեղից 1912 թ. փետրվարի 4-ին ՀՅԴ-ը կաղմակերպում է նրա փախուստը: Սակայն հաջող փախուստը պսակվեց անհաջողություն: Փախուստից ընդամենը 17 օր անց ոստիկանությունը հաջողվում է Նոր-Բայազետ գավառի Նորադուղ գյուղում ձերբակալել Կուկունյանին ու նրա երեք ուղեկիցներին: Ապրիլի 25-ին հին մարտիկը նորից նկատվում է Գանձակի բանտը: 1913 թ. մարտի 9-ին Սարգիս Կուկունյանն իր ընկերների հետ նորից կանգնում են Թիֆլիսի դատաստանական պալատի առջև: Կուկունյանն

55 Հ. Պ. Պ. Վ. Կովերագրերի ֆոնդ, Դ. Անանունի արխիվ, թ. 12:  
56 Նույն տեղում, թ. 13:

արդեն ուներ իր գերագույն պատիժը՝ 15 տարվա տաժանակրություն, ուստի փախուստի հանցանքը չէր փոխում նրա պատժի չափը:

Դանձակի բանտից Կուկունյանին շղթայակապ փոխադրում են Օրյոլ քաղաքի տաժանակիրների բանտը: Առանց այն էլ քայքայված առողջություն ունեցող մարտիկը հազիվ մեկ տարի է դիմանում Օրյոլի բանտային պայմաններին և 1913 թ. նոյեմբերի 26-ին բանտի խոնավ խցում թոքախտից կնքում է իր մահկանացուն:

«Ծանր էր խաչդ, դու պիտի մեզի ճամփա բանայիր Անհայտին մեջ, առաջին արահետը:

Կյանքը անողորմ եղավ դեպի քեզ, ինչպես ջո սիրած Ազգիդ: Դու եղար անոր մանրանկարը, ո՛վ Մեծ Տառապյալ»<sup>57</sup>, - այսպես է բնորոշել Կուկունյանի կյանքը Փարեզին խոսակր: Այո՛, նրա կյանքն ինքնամոռաց նվիրում էր:

Կուկունյանն ապրեց 50 տարի 10 ամիս. այդ ժամանակի մեծագույն մասը նրան չպատկանեց: Նրա կյանքից տարիներ կորցեցին ցարական ոստիկանությունն ու գատարանը, որոնց վճիռներն էին վարչական տարագրություն՝ 5 տարի, նախնական ձերբակալություն՝ 2 տարի 9 ամիս, տաժանակիր աշխատանք՝ 35 տարի<sup>58</sup>: Սա Կուկունյանի անձին զուգորդված ողբերգությունն էր, մինչդեռ նրա ձեռնարկը պատմական դարձրեց նրա անունը, ճանաչվեց, գիտակցվեց ու ղնահատվեց հանրության կողմից: «Խմբի (Կուկունյանի արչավախմբի-Կ. Ե.) արժեքը, - դրում է Ռուբենը, - պետք է որոնել իր մեջը, այլ պետք է որոնել այն ազդեցություն մեջ, գործողած է ժողովրդի հոգեբանության վրա»<sup>59</sup>:

Պատմությունն իր տրամաբանությունն ունի. հռչակով պատվի է արժանանում և անմահանում է նա, ով առաջինն է դալիս ասպարեզ, հիմք դնելով որևէ շարժման լինի դա գաղափարի, թե գործնական: Նման հռչակ ձեռք բերեց ու պատմությունը դարձավ ինքը խմբապետ Կուկունյանը: Նրա անունը սերտորեն կապվեց Հայ ազատագրական շարժման սկզբնավորման հետ: Նրա գործունեությունը ոչ մեծ ծավալ ունեցավ, ոչ էլ հարատևություն, բայց, որպես իր տեսակի մեջ առաջինը, արժանացավ յուրահատուկ ուշադրության: Կուկունյանը սկսող եղավ, որին հետևեցին մարտնչողների նոր խմբեր, այսինքն՝ նրա կատարած գործը ունեցավ պրոպագանդիստական բնույթ, ճանաչվեց և օրինակ ծառայեց, և նույն ճանապարհով Հայդուկների անվերջ խմբեր սկսեցին անցնել Երկիր ու կոնկրետ մղել սուլթանական բռնակալության դեմ: Ս. Կուկունյանի գլխավորած արչավախմբը ձախողվեց, որպես այդպիսին այն չկայացավ: Իր կազմակերպչականությունը այն շատ էր թույլ, բայց իր ողբերգական ու անցանկալի վախճանով հանդերձ Կուկունյանի արչավախմբը հետաքրքրական է և ուշագրավ: «Սա մի տարբերային հոսանք էր, ազնիվ, վեհ, ոգևորիչ հոսանք, որի առաջն անկարելի էր առնել ոչ մի հորդորանքով, ոչ մի խելացի պատճառաբանություններով, ոչ մի սարսափելի ասպագայի նկարագրություններով»<sup>60</sup>, - այսպես ճշտորեն է ըմբռնել շարժման էությունն ու խորհուրդը դաշնակցության հիմնադիրներից Ռոստոմը: «Այսուհետև Կուկունյանը էլ չի պատկանում ոչ՝ իրեն, ոչ՝ էլ իր ծնողներին, այլ կազմում է ամբողջ ազգի սեփականությունը. նրա անունը պիտի անցնի պատմության էջերը...»<sup>61</sup>: Եվ անցել է... նա իրավամբ ուհավիրան է այն մարտական բոլոր խմբերի, որ հետո պետք է անցնեին Երկիր և իրենց հերոսական մահով գերազանցեին մեր առաջին ուխտավորներին: Ռուբեն Սևյանի

57 «Ազատամարտ», Կ. Պոլիս, 1914, թիվ 2, հունվարի 12:

58 Հ Պ Պ թ, Վավերագրերի Ֆոնդ, Դ. Անանունի արխիվ, մմ. 10795, N 832, թ. 15:

59 Ռ ու Ե ն. Հայ հեղափոխականի մը հիշատակները. հ. Ա, Երևան, 1990, էջ 110:

60 «Վեմ», Փարիզ, 1935, N 10, էջ 86:

61 Դիվան ՀԹ Դաշնակցության. հ. Ա, էջ 11:



բնորոշմամբ՝ «Սարգիս Կուկունյանի արշավանքը հայկական առաջին «նաչակրաց արշավանքն էր»<sup>62</sup>: Այնուհանդերձ, արշավանքի հիմնական արժեքը պետք է համարել արևմտահայոց գատի պրոպագանդան ի ցույց ողջ նվիրույթի:

## ՏԱՐԿԻՍ ԿՈՒԿՈՆՅԱՆ Ի ՎՅՈՒՄԱՆ ԿՈՆՎՈՒՄԻ ՍԱՐԿԻՍԻ

*КАРИНЕ ЕГИАЗАРЯН*

### Ր Ե Յ Ո Մ Ե

Статья посвящена одному из примечательных явлений освободительной борьбы армянского народа – истории вооруженной экспедиции, возглавленной Саркисом Кукуняном. Этот вопрос до сих пор не был предметом специального исследования. Между тем С. Кукунян своей личностью и делом оставил заметный след в истории этой борьбы. На основе архивных и других материалов в статье освещаются поход вооруженного отряда Кукуняна в Еркир (Западную Армению), его поражение, указываются значение и место этого похода в истории освободительной борьбы армянского народа.

## SARKIS KUKUNYAN AND THE CAMPAIGN HEADED BY HIM

*KARINE YEGHIAZARYAN*

### S u m m a r y

The article is devoted to one of the major displays of the Armenians' struggle of liberation, the history of the armed campaign headed by Sarkis Kukunyan. This problem hasn't been the subject of a special scientific research so far. Nevertheless Sarkis Kukunyan by his person and his cause left a special trace in the history of that struggle. The campaign of Kukunyan's group to Erkir, his failure and the significance and place of this campaign in the history of the Armenian's struggle of liberation is shown in the article on the basis of archival and other materials.

<sup>62</sup> «Հայրենիք», 1937, N 7, էջ 110: